

գործունեության աջակցության նպատակով: Սակայն ոչ միայն ՏՏ-ում, այլև տնտեսության բոլոր ոլորտներում, այդ թվում անգամ գյուղատնտեսության մեջ ինովացիաների կիրառումը կարող է էականորեն բարձրացնել տնտեսության արդյունավետությունը՝ ի վերջո հանգեցնելով նաև միջազգային մրցունակության բարձրացման: Ելնելով վերոնշյալից, կարևորվում է ՀՀ-ում նոր ինովացիոն ռազմավարության մշակումն ու ընդունումը՝ այս անգամ շեշտադրվելով ինովացիոն գործունեության խթանումը ոչ միայն ՏՏ-ում, այլև տնտեսության բոլոր ոլորտներում: Ինովացիաների և միջազգային մրցունակության փոխառնչության գնահատումը, մակրոմակարդակում ինովացիոն գործունեության սահմանափակումների ախտորոշումը և ինովացիոն գործունեության խթանման նպատակով համապատասխան քաղաքականության արդյունավետության բարելավմանն ուղղված միջոցառումների մշակումը պայմանավորել են սույն հետազոտության արդիականությունն ու հրատապությունը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հետազոտության նպատակը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիաների միջև փոխառնչության գնահատումն է և ՀՀ-ում ինովացիոն քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.՝

- ուսումնասիրել միջազգային մրցունակության չափմանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները, ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը, գործիքակազմը և քաղաքականության իրացման մեխանիզմները,
- ուսումնասիրել ինովացիայի տարբեր տեսակների չափման տեսական մոտեցումները, ինչպես նաև քննական վերլուծության տեսանկյունից դիտարկել միկրո և մակրոմակարդակներում նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- հետազոտել ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը՝ ուսումնասիրելով ինովացիոն գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտը և մինչ այժմ կիրառված մեխանիզմները,
- ուսումնասիրել ՀՀ ինովացիոն ենթակառուցվածքները, դրանց գործունեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները, մարդկային կապիտալի վիճակը և դրա զարգացման խորքային խնդիրները,

- վերլուծել ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականը և գնահատել դրանց ինովացիոն գործունեության և ձեռնարկության չափի, ինչպես նաև գործունեության ոլորտի փոխառնչությունները,
- գնահատել ձեռնարկության ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական ուղղության փոխառնչությունները,
- գնահատել մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապը,
- համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ ինովացիոն ռեսուրսներն ու դրանց կենսագործման արդյունքները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրության հիման վրա ստացվել են տեսական, մեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներ, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթները հետևյալն են.

- 126 երկրի կլաստերային վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է երկրների կրթական համակարգի արդյունավետության և ընդհանուր ինովացիոն կատարողականի միջև առկա դրական կապը: Վերլուծության արդյունքներով Հայաստանը դասակարգվել է կրթության արդյունավետության և ինովացիոն կատարողականի միջին մակարդակ ունեցող երկրների շարքում:
- Միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մոդելով 67 երկրի պանելային տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն գնահատման արդյունքում բացահայտվել է արտոնագրային հայտերի թվի և արտահանման միջև առկա դրական կապը, սակայն ազդեցության թույլ ուժգնությամբ: Հիմնավորվել է արտոնագրերի աճի դրական ազդեցությունը արտահանման վրա:
- ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 1700 ձեռնարկությունների տվյալների հիման վրա ոչ պարամետրական Wilcoxon Rank Sum մեթոդով կատարված գնահատականներով հիմնավորվել է, որ կազմակերպության չափերը վերջինիս ինովացիոն գործունեությունը նշանակալիորեն սահմանափակող գործոն չէ:

- ANOVA մոդելի կիրառմամբ գնահատվել են ինովացիոն գործունեության ակտիվության տարբերությունները՝ ըստ Տնտեսական գործունեության դասակարգման (NACE խմբեր) տարբեր խմբերի և բացահայտվել ինովացիա կատարելու տեսանկյունից գործունեության ոլորտի նշանակալի լինելը:
- ՀՀ ձեռնարկությունների միկրոտվյալների հիման վրա Chi-Square թեստի կիրառմամբ գնահատվել են նրանց արտահանման շուկաների և ինովացիոն գործունեության փոխառնչությունները: Բացահայտվել է, որ ԵՄ և ասոցացված երկրների շուկաների վրա կողմնորոշված ՀՀ ձեռնարկություններն ավելի հաճախ են ինովացիաներ կատարում:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորված է թեմայի արդիականությունը, ներկայացված են հետազոտության նպատակներն ու խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տեսամեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, ստացված արդյունքները և նորույթները, արդյունքների գիտագործնական նշանակությունը, հետազոտության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև հետազոտության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Միջազգային մրցունակություն, ինովացիա և ինովացիոն քաղաքականության տեսագործական գնահատականներ»** գլխում իրականացվել է միջազգային մրցունակության տարբեր բնորոշումների, դրա վերաբերյալ տեսական և էմպիրիկ աշխատությունների, ինովացիայի և ինովացիոն գործունեության բնորոշումների, էվոլյուցիոն ընդլայնման, միջազգային մրցունակության և ինովացիաների չափման, ինչպես նաև ինովացիոն քաղաքականության միջազգային փորձի և դրա իրացման մեխանիզմների ուսումնասիրություն:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման օրենսդրական և գործնական հիմքերը»** գլխում քննարկվել են ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը, ինովացիոն ենթակառուցվածքները և մարդկային կապիտալը:

Ատենախոսության երրորդ՝ **«Ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ վերլուծություն (ՀՀ օրինակով)»** գլխում իրականացվել է ՀՀ ինովացիոն ռեսուրսների և արդյունքների համապարփակ վերլուծություն, մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ

վերլուծություն, ինչպես նաև ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականի վերլուծություն, որոնց արդյունքում ախտորոշվել են ՀՀ-ում ինովացիոն գործունեության խորհնդոտները, ուրվագծվել են ՀՀ ինովացիոն քաղաքականության առաջնահերթությունները:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը թույլ է տալիս կատարելու եզրահանգումներ և առաջարկություններ, որոնք ամփոփված են ատենախոսության **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում:

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ինչպես ցանկացած գիտական աշխատանք, սույն ատենախոսությունը ևս զերծ է որոշակի թերություններից, որոնցից կարևորել ենք հետևյալները.

1. Աշխատանքը վերնագրված է «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա», սակայն հեղինակը ոչ մի տեղ չի հիշատակում «նորաստեղծություն» եզրույթը, այդ մասին բացակայում է նաև բովանդակության մեջ, փոխարենը հեղինակը ատենախոսության արդիականություն բաժնում բացատրություն է տալիս, որ կիրառվել է «ինովացիա» եզրույթը՝ ելնելով ՀՀ օրենսդրափրավական ակտերից: Աշխատանքի գործնական նշանակությունն ավելի կբարձրանար, եթե բովանդակության մեջ կիրառվեր նորարարություն եզրույթը կամ հենց աշխատանքը վերնագրվեր «ինովացիայի ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա» (ՀՀ օրինակով):
2. Աշխատանքի էջ 87-ում հեղինակը նշել է «ինովացիոն ներդրանքի» մասին, սակայն անհասկանալի է, թե ինչ նկատի ունի «ներդրանք» ասելով: Քանի որ վերլուծվել է Համաշխարհային նորարարական համաթիվը, հավանաբար նկատի է ունեցել «աուֆուր» և «ինփուր» ցուցանիշները: Այդ պարագայում ցանկալի կլիներ, որ հեղինակը գծապատկերի տեսքով առանձնացներ «աուֆուր» և «ինփուր» ցուցանիշների ենթահամաթվերը:
3. Աշխատանքի 3.1 ենթահարցը նվիրված է նորարանությունների ռեսուրսների և արդյունքներին, սակայն «Համաշխարհային նորարարական համաթիվ» զեկույցին հեղինակը կատարել է ընդամենը մեկ հղում (էջ 87-ում), չնայած, որ ողջ վերլուծությունը նվիրված է դրան: Նշենք նաև, որ էջ 87-ում հեղինակը օգտագործել է նաև ԳԻՀ հապավում, որի բացված տարբերակը աշխատանքում չկա: Հավանաբար նկատի է ունեցել Համաշխարհային նորարարական համաթիվը կամ Գլոբալ ինովացիոն ինդեքս, իսկ այդ դեպքում հապավումը կլիներ ՀՆՀ կամ ԳԻԻ: Հեղինակը աշխատանքում կիրառել է համաթիվ՝ էջ 87,

ենթաինդեքս՝ էջ 103, ենթասյուն՝ էջ 103, հիմնասյուն՝ էջ 104, որոնց մի մասը մեկը մյուսի համարժեքներն են:

4. էջ 123-ում հեղինակը ավարտել է վերլուծությունը, այդպես էլ անորոշ թողնելով արդյունքները: Եթե կատարվել է վերլուծություն, ապա անհրաժեշտ էր ամփոփել համապատասխան ոլորտի նորարարության հակում ունեցող ձեռնարկությունները: Մյուս կողմից էջ 126 երկրորդ պարբերությունում ատենախոսը որպես ամփոփ միտք գրում է, մեջբերում. Այսպիսով, ամփոփելով էմպիրիկ վերլուծության արդյունքները կարող ենք նշել, որ տնտեսության որոշ ոլորտների ընկերություններն ավելի հակված են ինովացիաների, քան մյուսները: Հստակեցման կարիք կա, թե տնտեսության որոշ ոլորտներ ասելով հեղինակը կոնկրետ ո՞ր ոլորտները նկատի ունի:
5. Աղյուսակ 3.7 և աղյուսակ 3.9 վերնագրերից չի հասկացվում, թե ո՞ր երկրի ցուցանիշներ են ներկայացված: Եթե դրանք ՀՀ-ի տվյալներն են, ապա պետք է աղյուսակի վերնագրերում նշվեր այդ մասին: Բացի դա, աղյուսակ 3.7-ում ՏԳՏԴ խմբային դասակարգիչների մեջ բացակայում է D խումբը՝ էջ 120, որը, սակայն, առկա է աղյուսակ 3.9-ում՝ էջ 122: Նշենք նաև, որ աղյուսակ 3.9-ում ներկայացված ՏԳՏԴ խմբերը անհասկանալի են տարանջատված, և չի հասկացվում, թե ներկայացված 4 խմբերը որ շուկաներին են վերաբերում:
6. Ատենախոսության 4-րդ նորոյթում Տնտեսական գործունեության դասակարգման խմբերի հապավումը ներկայացված է անգլերենով՝ NACE խմբեր, Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հեղինակը ամբողջ ատենախոսության մեջ կիրառել է հապավման հայերեն տարբերակը՝ ՏԳՏԴ-ն, ուստի, մեր կարծիքով, նորոյթի ձևակերպման մեջ ևս պետք էր կիրառել հայերեն տարբերակը: Բացի դա, տվյալ նորոյթում առկա գործունեության ոլորտի նշանակալի լինելը բացակայում է աշխատանքում, որից էլ պարզ չէ, թե որ ոլորտներն են դրանք (այս մասին նշված է նաև 4-րդ դիտողության մեջ):
7. Օգտագործելով Wilcoxon Rank Sum թեստը՝ հեղինակն ուսումնասիրել է ընկերության չափերով պայմանավորված ինովացիոն գործունեության տարբերությունը, որի արդյունքում ցույց է տվել դրա վիճակագրորեն նշանակալի չլինելը: Սակայն, մեր կարծիքով, ստացված արդյունքները չեն արտացոլում ազդեցության իրական պատկերը, քանի որ ուսումնասիրության ընթացքում դիտարկվել են միայն այն ընկերությունները, որոնք ունեն ավելի քան 10 աշխատակից, հետևաբար ստացված արդյունքները ներկայացուցչական չեն բոլոր կազմակերպությունների համար: Նշենք նաև, որ դիտարկվող ընկերությունները կայացած են շուկայում: Իսկ եթե ընտրանքը կատարվեր բոլոր ընկերությունների շրջանակում անկախ աշխատողների թվաքանակից, ապա

ստացված արդյունքը կարող էր այլ լինել: Նշվածը տարածվում է նաև Հայաստանի օրինակով միկրոմակարդակով իրականացված վերլուծության այլ արդյունքների վրա: Ուստի հեղինակը պետք է նշեր, որ ստացված արդյունքները վերաբերում են միայն 10-ից ավելի աշխատող ունեցող ընկերություններին:

8. Աշխատանքում առկա են տեխնիկական բնույթի մի շարք թերություններ, մասնավորապես, որոշ գծապատկերներ և աղյուսակներ ճշգրտման կարիք ունեն, օրինակ՝ 3.1 գծապատկերը ցույց է տալիս ԳԻՀ արժեքները 3 տարվա ընթացքում, սակայն վերնագրում նշված է 5, ինչպես նաև տվյալ գծապատկերում գունային ծածկագրերը և ներկայացված տվյալները չեն համընկնում: Աշխատանքում կան աղյուսակներ և գծապատկերներ, որոնց վերաբերյալ հղումները բացակայում են, մասնավորապես. աղյուսակ 3.12, գծապատկեր 3.1, 3.2 և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ռուզաննա Բարիջանի Թադևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը կարելի է որակել որպես ինքնուրույն հետազոտություն, որն ուղղված է ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության վրա նորաստեղծությունների ազդեցության բացահայտմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինովացիոն քաղաքականության մշակման և իրականացման, հետազոտությունների և մշակումների խթանման քաղաքականության իրականացման գործընթացում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարության կողմից: Ատենախոսության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինովացիաներով և միջազգային մրցունակությամբ զբաղվող մասնագետների համար:

Թեկնածուական ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական բովանդակությունը, արդյունքները և գիտական նորույթը: Հեղինակի կողմից հրապարակած 5 (հինգ) գիտական հոդվածները համապատասխանում են հետազոտության ուղղվածությանը, դրա խնդիրներին և ունեն բավարար ընդգրկունություն:

Ռուզաննա Բարիջանի Թադևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը և դրան համատեղ կազմված սեղմագիրն ու թվով 5 (հինգ)

